Ես ետ նայեցի, փոքրիկ հովիւների մէջ արդէն սկսել էր կռիւը խաչերի բաժանման մասին:

Ի՜նչ մեծ զանազանութիւն այդ փոքրիկ հովիւների եւ այն փոքրիկ հովիւների մէջ, որ քարկոծում էին սուրբ գրքերի տարածողին: Դրանք խաչեր բաժանողի աջն էին համբուրում, իսկ նրանք սուրբ գրքեր բաժանողի վրայ քար էին ձգում:

Կրօնաւորը դարձեալ սկսեց Ասլանի հետ ֆրանսերէն խօսել: Երբ նրանք փոքր-ինչ հեռացան, ես հարցրի կրօնաւորի ծառայից:

— Ո՞վ է այդ մարդը:

— Մեր «գերապայծառն» է, — պատասխանեց նա մի առանձին հպարտութեամբ:

Ես իսկոյն հասկացայ, որ այդ կողմերում նոր յայտնուած եզոիտ կրօնաւորներից մէկը պէտք է լինի, որոնց մասին շատ բանգր էի լսել: Բայց ինչո՞ւ պարծենկոտ ծառան իր տիրոջը «գերապայծառ» տիտղոսը տուեց, որը հայ-կաթոլիկները տալիս են իրանց եպիսկոպոսին միայն:

— Իսկ դու հա՞յ ես, — հարցրի նրանից:

— Աստուած մի արասցէ, — պատասխանեց նա երեսը խաչակնքելով, — ես «փռանգէ եմ:

— Փռանգի լեզուն իմանո՞ւմ ես:

— Փռանգը ո՞րն է, լեզուն ո՞րն է, — կոպիտ կերպով հարցրեց նա. — ես փռանգի հաւատիցն եմ:

Նա չգիտէր, որ փռանգները (ֆրանսիացիք) առանձին ազգ են, առանձին լեզու ունեն, կամ կարծում էր, որ փռանգը կրօնի անուն է: Արփիարը տհաճութեամբ լսում էր մեր խօսակցութիւնը:

— Որտեղացի՞ ես:

— Այն գիւղից, որ հիմա դուրս եկանք: — Նա ցոյց տուեց «կարճազատնեերիէ գիւղը, որի մասին այնքան համակրութեամբ էր խօսում «գերապայծառը»:

— Քո հայրն ու մայրը նոյնպէս փռանգնե՞ր էին:

— Ոչ, նրանք «հերձուածողներէ էին:

— Հայեր չէի՞ն:

Նա վրդովուեցաւ: